

ԲԱՐԻ ԵՐԹ ՃԱՏՐԱԿԻ ՀԱՅԱԶԳԻ ՀԵՐՈՍՆԵՐՈՒՆ

Posted on July 17, 2011 by Keghart



Category: [Opinions](#)



Կայծակ Մագոսաւեան, Լուկանոյ, Չուիցերեայ, 24 Յուլիս 2011

Կ'ուզէի պահ մը մոռնալ մեր Չուիցերիոյ եկեղեցական տիտղոս դէպքերը, Հայաստանի Սանահին վանքին շուրջ վիճաբանութիւնները, Մայր Հայրենիքի տնտեսական մտահոգիչ վիճակը և ցաւալի արտագաղթը: «Գեղարդ»ի յարգելի ընթերցողներուն հետ պիտի փափաքէի բաժնել իմ հոգեկան ապրումներս այս օրերուն հեռաւոր Չինաստանի Լինկայո քաղաքին մէջ տեղի ունեցած ճատրակի աշխարհի առաջնութեան կապակցութեամբ, մասնակցութեամբ 10 առաջնակարգ երկիրներու ազգային հաւաքականներու ընդ որս Մայր Հայրենիքի 5 ներկայացուցիչներու գլխաւորութեամբ՝ անկրկնելի Լեւոն Արոնեանի:

Յարդ մեր անզուգական հայրենակիցներու փայլուն յաղթանակներուն մասին հիացմունքով կ'արտայայտուին աշխարհի ճատրակի մասնագետները: Բոլորիս մաղթանքն է որ Ռդիմպիական ճատրակի կրկնակի բարձունքին հասած մեր հայորդիները հասնին լաւագոյն արդիւնքներու: Խաղերուն կարելի է հետեւիլ www.armchess.am կայքէջով:



Courtesy www.armchess.am

Երբ այս տողերը կը գրեմ իմ մտածումները դէպի ետ կը սաւառնին ուղիղ 48 տարիներ՝ Հայաստան: 1963 թուականին Մոսկուայի մէջ տեղի կ'ունենար աշխարհի ճատրակի մրցումը հայազգի Տիգրան Պետրոսեանի և Միխայել Բոթվիկի միջև: Երեւանի «Մոսկուայ» սինեմասրահի փողոցը խուռներամ ժողովուրդը ամեն օր ներկայ կը գտնուէր և ժամերով համբերութեամբ կը հետեւէր հսկայ ցուցատախտակին վրայ զետեղուած խաղերուն:

Սբ. Էջմիածնի Հոգեւոր Ճեմարանի հայ ժողովուրդի պատմութեան դասախօս Պրն. Յովաննիսեանի խօսքերը անկարելի է մոռնալ, «Տիգրան Պետրոսեան իր այս յաղթանակով այնպիսի հայկական պրոպականդ արեց թէ՛ դա լինի Սովետական տարբեր երկիրների ինչպէս նա՛եւ արտասահմանի մէջ ապրող հայերուն քան Հայաստանի կառավարութիւնը իր 40 տարուայ ընթացքում»:

Բարի երթ Ճատրակի Հայազգի Հերոսներուն:

Toronto, 26 July 2010

We are very pleased to inform you that at Ningbo, China, Team Armenia, with 14 points, amongst Top-10 chess countries, won the WORLD CHESS TEAM CHAMPIONSHIPS.

5 Wins, 4 Draws and NO Losses = 14 Points.

Congratulations to Levon Aronian, Sergei Movsessian, Vladimir Akopian and Gabriel Sargissian !!!



To view results and other details click on [World Chess Team Championship](#)



